

ՀԱՆԳԻՊՈՒՄ ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ՀԵՏ ՀՀ ԳԱ ԱԿԱԳԻՄՄԱՅԻ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆՈՍՈՒՄ՝ ՆՐԱ ՄՆԵԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Սեպտեմբերի 27: Ազգային ակադեմիայի նախագահության նիստին ներկա էին նաև բաժանմունքի անդամներից շատերը և ուրիշ մարդիկ: Քանի որ նիստերի մեծ դահլիճը նախօրոք տրամադրվել էր ինչ-որ սիմպոզիումի, նիստը տեղի ունեցավ փոքր դահլիճում: Խոսվության փորձերից հետո ճամփեքը փակ էին: Շատերը շկարագացան տեղ հասնել: Բաղրամյանը լրիվ անջատված է: Միայն ոտքով: Մերձակայքի շրջաններից հնարավոր չէ գալ: Հակառակ այդ ամենին՝ ժամը 10-ին սկսված նիստը անցավ շատ լուրջ, շատ ջերմ և գիտական մակարդակով: Խոսեցին ակադեմիկոսներ Ֆադեյ Սարգսյանը, էգուարդ Ջրբաշյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Լևոն Հախվերդյանը, Մկրտիչ Ներսիսյանը, Սերգեյ Աբրահամյանը, Գևորգ Ղարիբջանյանը, Գաբրիլ Սարգսյանը, համալսարանի կողմից՝ պրոֆ. Վազգեն Գարրիբյանը: Եվ իհարկե, նաև Հրանտ Թամրազյանը: Ի՞նչ էին ասում նրանք:

Ազգային ակադեմիայի պոեզիոնտը կարճ խոսքի մեջ ջերմ գնահատեց Հր. Թամրազյանի մարդկային կերպարն ու մեծ վաստակը, որը լուրջ դեր է խաղացել գրականագիտության ասպարեզում, և խոսքը տվեց ակադ. էդ. Ջրբաշյանին:

էդուարդ Ջրբաշյան — Ուզում եմ ինչ-որ շափով տալ Հրանտ Թամրազյանի աշխատանքի ընդհանուր բնութագիրը, ստեղծել նրա գրական ճանապարհի մտտավոր պատկերը, ընդգծել մի շարք բնագավառներում նրա բերած նորությունները, նրա վաստակը հայ քննադատության, հայ նոր և ժամանակակից գրականության գնահատության ասպարեզում: Լայն են նրա ընդգրկումը և հետազոտությունների շրջանը՝ գրական-քննադատ, գրականության հիմն և նոր շրջանի պատմաբան, հայ նոր և նորագույն շրջանի պոեզիայի վերլուծող, բազմաթիվ գրական դիմանկարների և էսյուզների հեղինակ, մանկավարժ, հեղինակ մի շարք երկարակյաց դասագրքերի... Նախ՝ համալսարանում. Արսեն Տերտերյան, Մկրտիչ Մկրչյան և Հրանտ Թամրազյան՝ նրանք են համալսարանի գրականության երեք նշանավոր պատմաբանները, վաստակած ամբիոնի վարիչները և մանավանդ լայնորեն ճանաչված ու սիրված դասախոսները, որոնց մեծ դեր են խաղացել գիտական և ու-

սումնական կյանքում, լուծել բարդ խնդիրներ, պատրաստել բազմաթիվ կադրեր, ստեղծել գրականագիտական դպրոց, զարգացրել գրականագիտության մի շարք կարևոր էյուզներ: Դրանց թվում են բազմաթիվ բոլորովին նոր հատուկ կուրսեր՝ Սփյուռք գրականության և հայ բանաստեղծության զարգացման ուղիների մասին, մանավանդ քննադատության պատմության հիմնական դասընթացներ, որոնք ստեղծվել են Թամրազյանի անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ: Դա վերաբերում է նաև բուհական ծրագրերին, հիմն ու նոր դասագրքերին և այլն:

Դրանց հետ համաշխարհային են գիտնականն ու քննադատը, գրականագետը: Ես շատ բարձր եմ գնահատում երիտասարդ Թամրազյանի խիզախ ելույթները պոեզիայի ներկայի և ուղիների մասին, բանավեճերն ու համագումարների ղեկուցումները, որոնց վառ տպավորությունը այսօր էլ չի ջնջվել: Դրանք այսօր էլ պահպանում են իրենց արդար խորհուրդը և ուժը... Զարմանալի եռանդով և նպատակասլաց նա 50—60-ականներին ազդում էր: գրական կյանքի ու մտքի վրա, գրում կեղծ պաթոսի, ճարտասանության, այսպես կոչված՝ սուտ «ինտերնացիոնալիզմի» և «գրոհային» ֆեմաների դեմ: Եվ հետո հատկապես մեծ եղավ նրա վաստակը 19—20-րդ դարերի պոեզիայի և արձակի ուսումնասիրության ասպարեզում: Դեռ երիտասարդ օրերին գրած հայ գրականության դասագիրքը, Ալ. Շիրվանզադեին նվիրված մենագրությունները, «Միամանկոն», «Գրական ուղիներում» ժողովածուն, «Երիտասարդ Չարենցը» նրան բերեցին անուն և հռչակ, քանի որ նրանք նոր խոսք էին մեր գրականագիտության մեջ, նրանց մեջ շրջադարձային շատ բան-կար հայ գրականության պատմության, պոեզիայի, անգամ քաղաքական հոսանքների վերագնահատման տեսանկյունից: Մանրակշիռ էին նաև նրա նոր գրքերը. Եդ. Չարենցի, Վ. Տերյանի, Հակոբ Ասատուրյանի, Գ. Գեմիրճյանի, Հովհ. Թումանյանի մասին, ժրանաստեղծության հազարամյա խորհուրդը՝ էսյուզների ժողովածուն: Այդ գրքերի մեջ հստակ ընդգծվում է գեղարվեստական, մասնավորապես հոգեբանական շերտերի խնդիրը, բացվում երկերի էմոցիոնալ և խոհական տարրերը:

Հրանտ Թամրազյանը մեծ ջանքեր է գործադրել հայ գրական-գեղարվեստական մտքի զարգացման պատմությունը հետազոտելու ասպարեզում՝ սկսած վաղ միջնադարից մինչև 19-րդ դարի վերջը: Այդ հարցերին նվիրված տևական աշխատանքները ամփոփված են «Հայ քննադատություն» երեք հատորներում: Իր երկերում Թամրազյանը միշտ էլ ինքնատիպ է, անկրկնելի, ամենուր և ամեն դեպքում երևում է նրա ոճը՝ կենդանի, կրթոտ և ջերմ, որն անմիջապես գրավում է ընթերցողին:

Այսօր շատ բան կարելի է ասել նրա երկերի մասին, շատ բան հիշել: Բայց այս պահին ես հիշում եմ այն հեռավոր հուլիս օրը՝ 1954 թ. փետրվարը, երբ համալսարանի մեծ դահլիճում մենք երկուսս նույն նիստում պաշտպանեցինք քննակառուցական դիսերտացիաներ: Եվ այսպես համատեղ ընթացավ մեր անդուլ աշխատանքի ուղին:

Ես ուղչում եմ Հրանտ Թամրազյանի՝ տառնամյակների տևական աշխատանքը և բացառիկ վաստակը: Նա միշտ էլ եղել է մեր գրականության ամենահեղինակավոր և ազդեցիկ դեմքերից մեկը, որն իր սերնդի հետ մեծ պայքար է մղել անցյալի և ներկայի արատավոր երևույթների, մանավանդ գոհնիկ սոցիոլոգիզմի դեմ, մշտապես պահպանել գեղարվեստի բարձր շահանիշները՝ ճամփա բացելով գալիքի համար: Նրա ձայնին այսօր էլ հանույթով ու հավատով են ունենդրում և գրականագետները, և ընթերցող լայն հասարակությունը:

Վաղիմիր Բարխուդարյան— Ես այսօր հուզված եմ: Ուզում եմ շերմ խոսք ասել մի արժանավոր, մեծավաստակ մարդու մասին: Մենք 50 տարվա ընկերներ ենք՝ սկսած ուսանողական տարիներից մինչև այսօր: Ծանաչել եմ նրան դեռ հանրակացարանից: Արդար ու ազնիվ այդ երիտասարդը շահել օրերին տպագրած հոդվածներով ու գրքերով արդեն ուշադրություն էր գրավում: Նրա երկերում խիզախորեն լուծվում էին ու յուրովի մեկնաբանվում անցյալի որոշ բարդ երևույթներ, գրական և քաղաքական ճանապարհի հարցեր: Թամրազյանի գրքերը կարդացվում էին սիրով, հաճույթով, քանի որ հենց սկզբից ունեին նաև գիտական ու գրական հմայք: Այսօր առանձին հարգանքով ուզում եմ ասել նաև, որ Հրանտը շատ ամուր մարդ էր և երբեք չէր փոխում իր սկզբունքները և ըմբռնումները: Խոսք կարող է լինել միայն բյուրեղացման և խորացման մասին: Կարող եմ ասել, որ բոլոր բարդ անցումների ժամանակ նա գրեթե բան չի ունեցել փոխելու, քանի որ գրել է նաև գալիքի արգար զգացողություններ:

Ամեն անգամ այս տաղանդավոր գրականագետը մեզ կանգնեցրել է անակակալների առաջերեք տրորված ճամփով չի գնացել, չի սրբել կրկնել իրեն և ուրիշներին: Երբ լսեցինք, որ գրում է մեծ աշխատանք հայ քննադատության պատմության վրա, զարմացանք: «ԶԷ՝ որ

դա իր մասնագիտությունը չէ»,— ասացին ու մանք: Բացի այդ, մի՞թե այդպիսի բան կա մեզանում, ի՞նչ քննադատություն հին և միջին դարերում: Բայց նա հայտնագործեց այդ աշխարհը և գրեց գիտական բարձր արժանիքներով օժտված եռահատորը: Ժխտ այդպես մտածում էինք՝ ինչպե՞ս կստացվի «Սիամանթոն», չէ՞ որ նա արևմտյան հատվածի մասնագետ չէ: Բայց նա գրեց հրաշալի գիրք՝ գեղարվեստական և քաղաքական նոր լուծումներով: Այդպես էր նաև «Եմբապետ Շավարշը», որը արտասովոր արձագանք՝ գտավ, Ժամանակի ոգուն ընդդեմ՝ նա լուծեց քաղաքական և պատմական մի շարք հարցեր, մասնավորապես հերթեց գրոհնիկ սոցիոլոգիական հայացքները, որոնք տարածված էին հայ ազգային կուսակցությունների և ազատագրական շարժման վրա: Ահա թե ինչու Թամրազյանը հատուկ հարգանք ունի նաև պատմաբաններից շատերի մոտ: Նա գրական երկերի մեջ մշտապես որոնել և գտել է նաև պատմա-քաղաքական ճշմարիտ երևույթները: Բացի այդ, հրաշալի գիտի հայ մամուլը, քաղաքական հոսանքների պատմությունը, մեծ կոնֆլիկտների բովանդակությունը: Ես սիրով և հարգանքով եմ նայում այդ մեծավաստակ գիտնականի կյանքին ու գործին:

Առե Զախվեդյան— Անկեղծ ասած՝ ես չեմ էլ հավատում, թե ակադ. Հր. Թամրազյանը արդեն 70 տարեկան է: Կարծես երեկ էր՝ «Ավանգարդի» 40-ական թվականների շերմաշունչ մթնոլորտը: Հիշում եմ այնքան սիրելի Վահագնին, Սուրիկին, Հրանտին, Հակոբին, Համայնին, նաև Պարույրին, որը հաճախ էր ավանգարդականների հետ լինում: Տարիների հեռվից ես տեսնում եմ այդ խիզախ և ուժեղ պատանիների շերմաշունչ օրերը, որոնումները, վեճերը՝ և բուն վերելքը:

Հրանտը գրական ասպարեզում շատ արագ զանազանվեց իր խիզախությամբ: Սկսեց տպագրվել: Արագ հասունացավ՝ գրելով շատ համարձակ հոդվածներ ու գրքեր: Տարիների ընթացքում դրսևորվեց նրա արտասովոր ընդունակությունը: Բազմազան ու բազմաբնույթ՝ տաղանդը նյութ էր թաղում հայոց բոլոր դարերից, գրական բոլոր տեսակներից ու նյութերից: Ետևում նա իր վրա հրավիրեց մարդկանց ուշադրությունը՝ նորագույն բանաստեղծության մասին իր բանավիճալին հողվածներով, որոնք մեծ արձագանք գտան վերագնահատման ուժեղ կերբով: Ամենուր նա ձգտում էր վերագնահատել, նոր հայացք մշակել: Այդպիսին է հայ գրականության դարաշրջական դասագիրքը, շատ բարձր երևույթ էր «Եմբապետ Շավարշը»՝ պատմական դարաշրջանի լույսի տակ՝ հոգվածը, որն իր խորունկ ու խիզախ լուծումներով նվաճեց հասարակական լայն շրջանների համակրանքը: Լույս էին տեսնում նրա նոր գրքերը՝ «Դերենիկ Դեմիրճյան», «Պոեզիան պատմության քառուղիներում»: Նուրբ և գեղեցիկ ոճով էին գրված «Երիտասարդ Չարենցը», «Եղբիշ Չարենցը»,

«Վահան Տերյան», «Գրական դիմանկարներ, հոգովածներ» գրքերը, որոնց մեջ գեղարվեստը քննվում էր հոգեբանական և քաղաքական բարձրը շափանիչներով: Եվ հանկարծ այս բոլորից հետո ձևավորվեց «Հայ քննադատություն» եռահատոր աշխատանքը, որի արժանիքն անգնահատելի է:

Ես այսօր զարմանում եմ. Հրանտ Քամրազյանը 50 տարի առաջ սկսեց զբաղվել Շիրվան-զադեի դրամատուրգիայով, շատ փայլուն պաշտպանեց թեկնածուական դիսերտացիան, և թե՛ վում էր, թե՛ նրա տարերը թատրոնն է, թատերական արվեստը: Երբ այսօր նայում ես նրա ստեղծած գիտական վաստակին, ապշում ես. մի ամբողջ գրադարան կազմող մենագրություններ, բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ՝ գրական նյութի աճելի ընդգրկումով: Աշխատություններ՝ առանձին հեղինակների և մեր գեղարվեստական ու գրական մտքի տարբեր շրջանների մասին: Հայոց մշակույթի 5-րդ դար, միջնադար, նոր շրջան, խորհրդահայ գրականություն: Ամենուր Հրանտն է, ամենուր խորը... Ամենուր դրսևորվում է նրա կենտրոնացման մեծ ձիրքը:

Սկզբնապես Վահագն Դավթյանը տարակուսանք է հայտնել. «Ինչու՞ն գրքեր ես գրում Շիրվանզադեի, ոչ թե Քումանյանի մասին, որին շատ ավելի ես սիրում»: Քամրազյանը հարցին տվել է շատ հստակ ու արտահայտիչ բացատրություն. «Քումանյանի համար զեռ պատրաստ չեմ, հասունացած չեմ»: Մեզ էլ այդպես էր պատասխանում: Իսկ ահա Քումանյանի մասին մենք գրեցինք զեռ շահել հասակում: Հիմա կարգավով Քամրազյանի «Հովհաննես Քումանյան. բանաստեղծը և մտածողը» մենագրությունը՝ համոզվեցի, որ նա իրավացի է, իսկ մենք բուցե շտապեցինք, քանի որ Քումանյանին ըմբռնելու համար հարկավոր է կենսական մեծ փորձ, խտացում և բյուրեղացում, որը հատուկ է այդ գրքին:

Շատ զնահատելի և բովանդակալից աշխատանք է նաև «Առվիտահայ գրականության պատմություն» բունական դասագիրքը: Մանավանդ՝ գեղարվեստական, հոգեբանական հատկանիշների քննություններով, տրամաբանական հետևողականությամբ, քաղաքական հստակ լուծումներով և ինքնատիպ մտածողությամբ: Ես շատ ուշադիր եմ կարդացել և աշխատանքի ընթացքում էլ օգտագործել այդ գիրքը: Նույնը կարող եմ ասել նաև «Թանաստեղծության հարամյա խորհուրդը» գրքի մասին: Մի զարմանալի բան. նա գրել է բոլոր ժամանակների, դարերի հայ գրականության, գրեթե բոլոր ժանրերի և տեսակների մասին՝ դրամատուրգիայից սկսած մինչև արձակ, մինչև ժամանակակից երևույթներ: Մի խոսքով՝ նրա ստեղծածը քրե-նագատական ամբողջացում, դարերի գրական մտածողության խտացումն է: Մանավանդ՝ հոգեբանական արժեքով: Ես կուզեի ընդգրկման իմաստով առանձնացնել «Հայ քննադատություն»

եռահատորը, վիթխարի աշխատանք, որ տեղ է տարիներ ու տասնամյակներ: Ինչքա՞ն է որոնել, մտածել, խորհել այդ գրքի ստեղծման համար: Մի ամբողջ ինստիտուտի գործ է կատարել այդ բարդ և խոր աշխատությունն ամբողջացնելու նպատակով: Այս գիտական վաստակը ապշեցուցիչ է իր ընդգրկումներով, ժամանակի և նյութի իմաստով: Բայց այստեղ էականը խորքն է. նա ամենուր իրեն զգում է ինչպես ձուկը ջրում, բերում է դարերի շունչը և սնկական նուրբ ու խոր հայացքը, հոգեբանական ուժը և հասարակական շիղջ, հոգեկան-իմացական թռիչքը և մանավանդ գեղարվեստական վերլուծության բարձր կարողությունը: Այս ամենին ուզում եմ ավելացնել, որ նա գրում է խիստ անհատական, ինքնատիպ ոճով, գեղարվեստական որոշ երանգավորումներով և շերտությամբ: Եթե նույնիսկ մի կտոր, մի հատված և պատասխիկ ընկնի ձեռքդ, իսկույն կըզգաս նրա թամրաղյանական կնիքը:

Մենք շատ բանով հարգատու ենք՝ զավակներով, ընտանիքներով, աշխատանքով: Տասնյակ տարիների, ավելի ճիշտ՝ կես դարից ավելի է այդ հարագատությունը: Ժամանակն անողորք առաջ է թռչում, բայց մնում ենք միշտ նույն հարագատները. մտերիմ ընկերներ են նաև մեր զավակները, մտերիմ են կանայք: Բայց, ափսոս, մենք այլևս բաժակակիցներ չենք, ուրեմն և քիչ ենք հանդիպում: Քաղաքական հայացքներով կարծես զուցե փոքր-ինչ զանազանվում ենք, բայց մեծուցեք միշտ մնում է մարդկային շերտությունը՝ ծնված աշխատանքի մեծ տարբերքի մեջ: Ես ողջունում եմ մեծավաստակ գիտնականի 70 տարին: Նա կարծես դարձյալ ինչ-որ նոր որոնումների մեջ է, զեռ ստեղծագործ շատ զաղտնիքներ ունի պահած... Ով՞ գիտե՞ ինչ անակնկալների կրերի մեզ, եթե, իհարկե...

Սերգեյ Սարինյան — Ամենից առաջ ես ուզում եմ խոսել գիտական մարդկանց ուրույն ճակատագրի մասին: Տարիների փորձով զգացել եմ մի հակասություն, հանգել մի եզրակացության: Գիտության մարդկանց խիստ ընդձված են երկու խումբ, Առաջին խումբը կազմող մարդիկ կարծես քայլում են նախապատրաստված հարթ, ողորկ, ասֆալտապատ ճանապարհներով ու մայթերով և առանց լուրջ շանքերի, առանց տառապանքի ու խոշորոտների անարգել գրավում բարձր չիրքերի: Նրանց ոչ մեկը չի խանգարում, հակառակը, որոշ ազդեցիկ մարդիկ հենարաններ են դնում նրանց ճամփին: Այնինչ երկրորդ խումբը՝ ինքն է հարթում իր ճանապարհը, առաջ է շարժվում մաքառումներով ու խիզախումներով, անցնում ստեղծագործական տառապանքների ու փորձությունների միջով, ստեղծում է ծանրակշիռ վաստակ ու թեև ուշացած՝ հասնում է նվաճումների ու բարձունքների, ուղեծրում գիտության առաջընթացը, դառնում ուսուցիչ, ազդում սերունդների մտածողության ու հոգեբանության վրա, ուղղություն տա-

լիս իր տաղանդի ուժով: Երկրորդ խմբի գրականագետներին է շրանտ Թամրազյանը: Նրա ծննդյան հորեղանը այս դահլիճում, կարծում եմ, պետք է նշվեր դեռևս 60-ական թվականներին: Ակադեմիկոսի կոչմանը նա արժանի էր դեռ այն ժամանակ, երբ, ի տարբերություն մեր գրականագիտության նկարագրական բնույթին, ստեղծում էր իր ինքնատիպ դպրոցը: Բայց, ցավոք, այս նույն ակադեմիան պատենշ քաշեց նրա առջև շուրջ 30 տարի, ինչպես նաև մի շարք ուրիշ շատ արժանավոր գիտնականներին և գրողներին առջև այդ ճանապարհը փակվեց:

Նենց սկզբից Թամրազյանի դպրոցն աչքի ընկավ պատմականության խոր զգացողությամբ և գրական երկերի հոգեբանական վերլուծությունների սկզբունքով, փաստերով ու պահանջով: 60-ականներին նա արդեն գրել էր «Շայ գրականություն» դասագիրքը, «Շիրվանզադե», «Սիամանթո» մենագրությունները, «Մամբապետ Շավարշը» պատմական դարաշրջանի լույսի տակ» հոդվածը, «Պոեզիան պատմության քառուղիներում» ժողովածուն և բազմաթիվ ուրիշ գործեր:

Այսօր արդեն Թամրազյանական դպրոցը տրվել է բազմաթիվ գիտնականներ, որոնք մեր գրականագիտության առաջատար ուժերից են:

Շուրջ 40 մենագրությունները, որոնց մեջ են «Շիրվանզադե», «Սիամանթո», «Եղիշ Զարենցը», «Շայ քննադատության» երեք հատորները, «Շովհանես Թումանյան» ֆունդամենտալ աշխատությունները, և հարյուրավոր հոդվածները խոսում են գրականագետի ստեղծած բացառիկ արժեքների մասին: Ըստ նույնպես շնորհավորում եմ վաստակաշատ գիտնականին 70-ամյակը և ցանկանում նոր վերելքներ...

Սերգեյ Արաճառյան— Բարձր եմ գնահատում նրա տաղանդի ուժը: Դեռ համալսարանում ուսանող Թամրազյանը հանդես էր գալիս գեկուցումներով, և մենք բոլորս վազում էինք լսելու նրան: Ժամանակի ընթացքում մեծ աշխատանքի մեջ բարձրացավ նրա ստեղծագործությունը, ձևվեցին բազմաթիվ գրքեր, որոնք ես կարդացել եմ հատուկ ուշադրությամբ: Այդ գրքերը՝ հայոց միջնադար, 19—20-րդ դարերի, ժամանակակից գրականության հարուստ երևույթների մասին, իրենց բնույթով հիմնարար են և շատ կենսունակ, չեն խոնարհում ժամանակի ընթացքում: Տաղանդ, համարձակություն, յուրօրինակ ոճ, ուր գեղարվեստական հմայք են ստանում գրական խոր լուծումները: Ինձ հիացնում են այդ զարմանալի բեղմնավոր գիտնականի գրքերն ու հոդվածները: Մանավանդ՝ լեզուն, հոգեբանական փորձի լուծումները: Եվ դրա հետ, անշուշտ, շատ բարձր է նրա մարդկային կեցվածքը, վարքագիծը. նա միշտ հավատարիմ է ինքն իրեն, իր ճշմարտությանը և միշտ աչքի է ընկնում բարձր մարդասիրությամբ: Սիրում է մարդկանց և գեղեցկությունը:

Գագիկ Սարգսյան— շրանտ Թամրազյանն ունի գիտական լայն ընդգրկում, աշխարհագրական և ժամանակագրական մեծ տարածք: Բայց կարևոր են հատկապես գիտական խորությունը, նոր հայտնագործումները: Վահագն Դավթյանը ճիշտ և լավ է գրել՝ «նրա մոտ գեղարվեստն ու գիտությունը միասին են»: Զգացմունքի պայթյունիկ ուժը և գիտական խորքը միաձուլվել են: Մանավորապես բարձր եմ գնահատում «Շայ քննադատության» 1-ին և 2-րդ հատորները, կարդացել եմ հատուկ ուշադրությամբ: Դրանք նոր էջ են բացում հայագիտության մեջ: Նրա գրքերը՝ խորապես նոր, ինքնուրույն և ինքնատիպ, կապված են և գեղարվեստական մտածողության և պատմական զարգացման սուր զգացողությամբ: Ըստ բարձր եմ գնահատում, անշուշտ, նաև արձակի ու բանաստեղծության մասին գրքերը՝ «Սիամանթո», «Շովհանես Թումանյան», «Վահան Տերյան», «Եղիշ Զարենց», որոնք շեղմորեն են ընդունել հասարակության լայն շրջանները: Ինչ էլ ուզում է լինել, ուր էլ, ինչ գիրք կամ հատված էլ լինի, անմիջապես կարող ես զգալ Թամրազյանի ոճը, շունչը: Նրա ոճի ինքնատիպության մասին խոսեցին բոլորը, նույնի ասաց նաև վեները: Ինչ-որ բաշտք բան կա նրա գրածներում՝ և բարձր խոհանոցություն, և գրավիշ չլրմություն, և բարձր գիտականություն...

Մկրտիչ Ներսիսյան— Շահույթով եմ եկել ակադեմիայի կազմակերպած այս միջոցառմանը՝ շնորհավորելու շրանտ Թամրազյանի ծննդյան 70-ամյակը: Մենք երկար ենք միասին աշխատել, ունեցել ենք բանավեճեր, բայց ես միշտ էլ համակրել եմ այդ իսկապես տաղանավոր գրականագետին, որն իր սկզբունքներն է հաստատել գիտության մեջ, ստեղծել է մեծ վաստակ յա ունի բազմաթիվ հետևորդներ: Իր համարձակ հարցադրումներով ու խիզախ ելույթներով նա եղանակ է ստեղծել, ուղի է հարթել առողջ և ազատ մտածողության համար, կայուն և հետևողական է եղել հայ ազգային քաղաքական հոսանքների, ազատագրական պայքարի մեկնարանությունն ու նրանց գեղարվեստական արտահայտություններին գնահատման մեջ և սկզբունքային՝ գիտական ու գրական բանավեճերում:

Ըստ եկել եմ նաև մի խնդրանքով. այստեղ հավաքված հայագետներին Պատմա-բանասիրական հանդեսի՝ խմբագրության անունից, իբրև նրա զլխավոր խմբագիրը, խնդրում եմ շրանտ Թամրազյանի կյանքն ու գործունեությունը, նրա գիտական վաստակը հանգամանորեն բնութագրող մի լույս հոդված մեր հանդեսում տպագրելու համար: Լավ է, որ հանրապետության թերթերը տպագրում են նրա մասին, բայց թերթերը կարող են շուտ մոռացվել և մնալ գրադարաններում ու արխիվներում: Մեր հանդեսը գիրք է, հեղինակավոր պարբերական, որ Հայաստանից բացի տարածվում է նաև արտասահմանի գիտական ու կրթական կենտրոն-

ներում: Կուզեի, որ Հրանտ Քամրազյան մարդուն և գրականագետին նաև մեր հանդեսի միջոցով ճանաչեին գրություն:

Կարգ 'Կարիքանյան—Հրանտ Քամրազյանը հետպատերազմյան շրջանի դեմքերից է: Հատկապես մեծ է նրա ավանդը հայ գրականագիտության մեջ:

Հիշում եմ, երբ 60-ական թթ. տարբեր կողմերից մեղադրում էին Հրանտին՝ այն ժամանակ որպես հերթապահ «հանցանք» դարձած նացիոնալիզմի մեջ, նա լքնկնկվեց և, իր տեսակետների մեջ համոզված, տարավ բոլոր հատվածները:

Այժմ էլ նա շնուպացող եռանդով շարունակում է իր գիտական ու մանկավարժական գործունեությունը, ուսանողներին և ընթերցողներին ուրախացնում իր բարձրարժեք աշխատություններով ու բովանդակալից դասախոսություններով:

Շնորհավորելով ակադեմիկոս, Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր Հրանտ Քամրազյանին՝ իր ծննդյան 70-ամյակի կապակցությամբ՝ ցանկանում ենք նրան քաջառողջություն և ստեղծագործական թռիչքներ:

Վազգեն Գարեբեյան— (համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան, հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչ, բանաս. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր):

Գիտությունների ակադեմիայի այս շնքի կամարների տակ ակադեմիկոս Հրանտ Քամրազյանի նախորդ հորեյլաններն էլ կարող էին նշվել, եթև պայմանը գիտական վաստակն է: Ինչէ: Ապացույցը ակադեմիայի նախագահության անդամների և մյուս ակադեմիկոսների ինձանից առաջ այսօր ասված խոսքերն էին: Այն խոսքերը, որ Քամրազյանին բնութագրեցին որպես հայ գրականագիտության առաջնակարգ գեմքերից մեկը, որի գիտական վաստակը պատկառանք է ներշնչում: Շուրջ քառասուն գիրք ու մի քանի հարյուր հոդված, կապիտալ ուսումնասիրություններ մի ամբողջ շարք գրողների՝ Նարեկացու, Քումանյանի, Միրվանզազի, Չարենցի, Սիամանթոյի մասին, «Հայ քննադատություն» եռահատորը մեր գրականագիտության նվաճումներն են: Նշվեց Քամրազյանի ուսումնասիրած նյութի մեծ շրջանակի մասին՝ 5-րդ դարից մինչև մեր օրերի գրականությունը, հիշվեց գրական տարբեր ժանրերի նկատմամբ նրա հավասար հետաքրքրությունը՝ պոեզիա թե արձակ, դրամատուրգիա թե քննադատություն: Հիշվեց գեղարվեստական երկի ներբությունների ընկալման հետ պատմական հենքի, դարաշրջանի ոգու բացահայտման Քամրազյանի կարողությունների մասին: Ասված ամենը շիրկնեմ:

Գրականագետ, գիտնական Քամրազյանի մասին ես այդ ամենն ասելու էի, բայց նորից կրկնել՝ երևի թե հարմար չէ: Ուտի և ես պիտի ասվածին ավելացնեմ Քամրազյանին բնութագրող մի երկու այլ հատկանիշ, նրա՝ հա-

մալսարանական կյանքի մի երկու դրսևորում, որ չափազանց ոգևորիչ և ուսանելի են մեզ նրա հետ աշխատողներին համար: Ձեր ու մեր առօրյա և ոչ հեշտ կյանքի այս օրերին, երբ հանդիպում ենք իրար կամ հավաքվում ենք մի քանի հոգով, կամա թե ակամա սկսվող ու ծայր առնող, հաճախ էլ բորբոքված զրույցը սոցիալական հարցերի, մեր խզճուկ աշխատավարձերի, շրջապատում տիրող անօրինությունների կամ քաղաքական խնդիրների շուրջն է: Չգիտեմ՝ հոգնած այդ ամենից, թե ներքին մղումով մեզ հետ զրույց է բացում բողոքովին այլ թեմայով՝ գրականության մասին, քննադատության մասին, վիճում է այս կամ այն գրականագետի՝ մամուլում հայտնած կարծիքի առիթով, ոգևորվում գրական որևէ երկում իր նոր՝ նկատած մի նոր գեղեցկությունը ու այդ վեճի կամ զրույցի պահին նա այնքան ներշնչված ու տպավորիչ է խոսում, որ ակամա մթնոլորտը լցվում է մի շերմությունը, որ կարող է ներշնչել միայն գրականությունը: Ստեղծվում է մի մթնոլորտ, որտեղ միայն կարելի է զգալ, որ դեռ գրականության դասախոս ես, որ քիչ հետո լսարան պիտի մտնես: Գրականությունը մաթեմատիկա չէ. գիտություն լինելով՝ նաև արվեստ է, և գրականագետ-դասախոսը՝ ակամա արվեստաբան, որ ներշնչման, ոգու կարիք էլ ունի: Հրանտ Քամրազյանը Ոգու պահպանիչն է նաև ու ներարկողը իր գործընկերներին: Նա գիտև իր շուրջը հավաքել իր գրականագետ (և ոչ միայն) գործընկերներին: Նա անհանգիստ, բնավորություն է, հինգ բույն ամբիոնի իր առանձնասենյակում չի կարողանում հանգիստ նստել, նրա ձայնը լսվում է հաճախ միջանցքում, կարիներտներում, ուր զրուցում է կամ դասախոսներին, կամ ուսանողների հետ: Իսկ զրույցի նրա սիրած ձևը երկար միջանցքի մի ծայրից մինչև մյուսը քայլելով զրույցն է, հին համալսարանների ճեմարաններում դասախոս ուղեցիչների հանգույն:

Ուզում եմ ավելացնել, որ Քամրազյանը՝ որպես ամբիոնի վարիչ, տիրապետում է իր ամբիոնի (և ոչ միայն) աշխատակիցներին գրական-դասախոսական գործի գնելու, գիտական, ուսումնական աշխատանքի մղելու, կազմակերպելու արվեստին. արդյունքում՝ համալսարանական գրականագետների գիտական աստիճաններն են, հրատարակած գրքերը, գիտական զեկուցումները, օր եղել են վերջին երեսուն տարիներին: Ցայտուճորեն նկատելի է, որ գրականագիտության գծով համալսարանական կրթության ու գիտության կազմակերպման գործում, չօրոք տարիների ընկացքում առանձնանում են երեք անուն՝ Արսեն Տերտերյան, Մկրտիչ Մկրտչյան, Հրանտ Քամրազյան: Մեզ համար, անշուշտ, հաճելի է, որ մեր պրոֆեսորը նաև Ձեր ակադեմիայի ակադեմիկոսն է, բայց երևի թե Ձեզ էլ հաճելի պիտի լինի, որ համալսարանում էլ ունենք ակադեմիկոս, որը թեև յոթականում տարեկան է, բայց օլերից մեկն է, որ

լի է ստեղծագործական եռանդով, որ դեռ իր նոր գրքերով կարող է զարմացնել:

Հրանտ Քամուրջյան— Անկեղծ ասած՝ դժ-վար համաձայնեցի այս նիստին կամ գնահատությունը, կամ մեծարանքին ներկայանալու: Ինչու: Կա մի հոգեբանական խոչընդոտ և դատաբանություն, որ գոյացել է անցյալ տարիներին: Չէ՞ որ շատ արժանավոր մարդիկ դաժանորեն և անարգար մերժվել են այս գիտական օչախում, ուր շատ ու շատ լուսավոր գլուխների հետ գործել են նաև զանազան գործարարներ: Էլ չեմ խոսում վերջին հայտնի ընտրաընթացի մասին: Ո՞վ գիտե՞ ով է մեղավոր, ո՞ւմ էր պետք այդ դաժանությունը, երբ մրցակից չու-նենալու դեպքում անգամ ջնջվեց տաղանդավոր Վահագն Դավթյանը, իսկ նրանից առաջ Պարույր Անակը, Հովհաննես Շիրազը և ուրիշ արժանավոր մարդիկ: Մի խոսքով...

Ես ուշադիր լսեցի, հուզմունքով լսեցի այդ ջերմ ելույթներն ու զնահատականները: Անկեղծ լինեմ: Վերջերս իմ «Կենսամատենագիտու-թյուն» գրքի առիթով ուշադիր կարդացի Նշա-նավոր գիտնականների և տաղանդավոր գրող-ների կարծիքները, դարձյալ հուզվեցի: Ինչու: Գնահատականը, իհարկե, հաճելի է: Բայց ինձ այնպես է թվում, որ նրանք շատ անգամ շատ ավելի ջերմ են եղել իմ գործի և անցյալի նը-կատմամբ և այսօր էլ ջերմ են, քան ես եմ եղել նրանց նկատմամբ: Համենայնդեպս պարտք եմ մնում նրանց...

Գուր խոսում էիք իմ գործի և աշխատանքի ծավալի ու կարևորության, գրական բեղմնավոր ճամփու մասին: Հաճելի է լսել: Բայց ես կու-զեմ խոսել իմ ճանապարհի մասին:

Գեղուկ ընտանիքի զավակ եմ: Հեռավոր Աշաշուր գյուղում տարված էի գրքերով: Ան-վերջ կարդում էի բոլորը, ինչ ձեռքս էր ընկե-նում: Գրքերը բացում էին հեռավոր աշխարհ-ների դռները: Երբեմն էլ փորձիկ հողվածներ էի գրում «Պիոներ կանչին» և «Ավանգարդին»: 1943 թ. աշնանը երևանարևակ ծանոթ ընտա-նիքի հետ ճամփա ընկա Երևան: Տեղ հասանք յոթ օր հետո: Մեքենա չկար: Մի 15 օր հետո ընկա հանրակացարան, բայց արդեն հիվանդ էի (տենդ ու զեղնուկ): Ընդունվեցի բանասի-րական ֆակուլտետ: Մեկ-երկու ամիս հետո ստիպված էի նաև աշխատել: Այն օրից մինչև հիմա, առանց դադարի: Նախ ընկա Ռադիոկո-միտե՝ «Վերջին լուրեր» խմբագրություն. դժ-վար էր, պատերազմի ժամանակ գործում էր դաժմկան դիսցիպլինան՝ աշխատանքի խտու-րույն կարգապահություն: Ու սովորեցի կար-դալ... վազելով: Ճամփան ձգվում էր կիրովի փողոցից մինչև այսօրվա փոստի շենքը, ուր տեղավորված էր նաև Ռադիոկոմիտեն: Ես հի-մա կարենկցանքով եմ հիշում ինձ. վտիտ, զեռ փոքր, խոփ և հաճախ շաներված մագնիսով մի տղա վազում էր Արովյանով... բացված՝ գիրքը ձեռքին: Մարդիկ կարծում էին՝ խախտված եմ: Երկար ժամանակ պետք եղավ, որ նորից հան-

գիտ կարգամ: Իսկ 1945-ից անցա վերաբացված «Ավանգարդ»:

Այո, ևս շատ եմ աշխատել, ձգտել, դիմա-դրել, թեև միշտ էլ կարծել եմ, թե ծուլլ եմ: Եկել էի հեռավոր գյուղից, ընկել քաղաքա-րենականների մեջ, որոնք ունեին շատ արժանիք-ներ: Ես պետք է մրցակցեի նրանց հետ և նը-պատակիս հասնել միայն տեղական աշխատան-քով և նպատակներով, ձգտումով: Սկսեցի տը-պագրվել, սկզբում միայն հասարակական հար-ցերի, կոմերիտիության գործերի մասին, հե-տո ընկերներիս ճշման տակ անցա նաև քննա-դատություն:

Իմ կյանքում մեծ դեր է խաղացել գրական ուսանողական այն տաղանդավոր խումբը, որի մեջ էին Վ. Դավթյանը, Պ. Սեակը, Ս. Աղա-բարյանը, Անոն Հախվերդյանը, հետո նաև՝ Հա-մո Սահյանը... Խումբը բոլոր ձևերով հաստա-տել էր ինքն իրեն և իր ճշմարտությունը: 50— 60-ականներին իմ աշխատանքի մեջ էական էր մաքառումը ընդդեմ սոցիոլոգիզմի և սուտ գա-ղափարաբանության: Այս հիմքի վրա են ձև-վել «Շիրվանզոհն» և «Սիամանթոն», «Խեմբա-պետ Շավարշը» պատմական դարաշրջանի լույ-սի տակ», ժամանակակից հայ բանաստեղծու-թյանը նվիրված զեկուցումները՝ համագումար-ներում և դիսպուտներում: Այս ոգին էր իշխում նաև «Հայ գրականություն» դասագրքում, որը գրեցի 29 տարեկան հասակում՝ լուսահոգի լու-սավորության նախարար Շավարշ Միմոնյանի ճշման տակ: Այդ դասագիրքին արդեն ունի 37 հրատարակություն: Նույն ոգին է իշխում նաև «Եղիշե Զարեհ» մենագրության մեջ և «Խոր-հրդահայ գրականության պատմություն» շատ էջերում:

Ապրել եմ դժվար մաքառում՝ ճշմարտության հասնելու և գեղեցկության պաշտպանության բնագավառում, ձգտել եմ հասնել գաղտնիքե-րին, թաքուն հոսանքներին և շերտերին: Աշխա-տանքը եղել է իմ երջանկությունը և նպատա-կը, և ճամփան... Այն հանգամանքը, որ ես շատ եմ գրել ու գրում գրքեր, նշանակում է՝ բնավ էլ հիացած չեմ ինձանով, ուստի կանգ չեմ առնում, ուզում եմ հասնել իմ նպատակին: Ունեցել եմ նաև աշխատանքի երջանկության պահեր, ներշնչանքի, ոգևորության ժամեր: Օրի-նակ՝ «Խեմբապետ Շավարշը» կամ «Մեծարեց— սուպաման հիվանդը» գրել եմ մի գիշերում, մի շնչով: Եվ կամ՝ «Սիամանթոն»՝ մեկ ամսում՝ Մոսկվայում, բուն վերելքով և առանց աղ-բյուրների, միայն հիշողությամբ: Ի դեպ՝ գրե-թե առանց սնվելու, քանի որ ժամանակ չունեի, չէի կարող բաժանվել աշխատանքից...

Այստեղ ուզում եմ մի փոքր շեղվել: Այն գի-շերը, երբ ավարտեցի իմ հողվածը «Խեմբապետ Շավարշի» մասին, Մոսկվայում էի: Զգիտեմ՝ ինչու, կեզեղերին զանգահարեցի Մկրտիչ Ներ-սիսյանին, որը նույնպես Մոսկվայում էր: Ու-զում էի նրան ներկայացնել իմ աշխատանքը, որը նաև պատմական-քաղաքական վերագնա-

հատման փորձ էր: Ասաց՝ վաղը կհանդիպենք: Էլ չգնացի: Անհարմար էր: Ու թեև նրանից մի փոքր էլ նեղացած եմ, պետք է հիշեմ մի դեպք. Երևանում ինձ սկսեցին մշակել ու ջարդել աջ ու ձախ, գործը հասավ կենտկում: Քըն-նարկման էին հրավիրվել գիտնականներ՝ ասել ու շահել: Շատ ջերմ խոսեց Աշոտ Հովհաննիս-յանը, պաշտպանեց ինձ: Ասաց՝ այդ հողվածը նոր սերնդի ձայնն է, Քամրազյանն է՝ նրանց ձայնափողն է: Իսկ երբ իմ ընկերներից մեկն ասաց, որ Քամրազյանը գրել է կոմունիստին ոչ վայել գործ, որ ազգային-ազատագրական պայքարը միշտ չէ, որ առաջադիմական է, ինչ-պես ասել է Լենինը, հնչեց Մկրտիչ Ներսիս-յանի ուժեղ և ազնիվ ռեպլիկը. «Լենինն այդ-պիսի բան չի ասել, ազատագրական պայքարը միշտ էլ առաջադիմական է: Քամրազյանը ճիշտ է»: Ես հիմա էլ մեծ հարգանքով եմ հիշում այդ պահն ու խիզախ ռեպլիկը:

Հնդհանուր ամամբ, իհարկե, անվերջ մտա-ծել եմ, որոնեւ տարիներ շարունակ: Հաճախ այնպես է թվացել, թե շատ արագ եմ գրել: Բայց ոչ: Այսպես, «Հայ քննադատության» երեք հատորը գրել եմ մոտ 30 տարվա ընթացքում՝ նյութ առնելով նաև իմ գասախոսություններից, և պատմագրությունից, և պոեզիայից, և փիլի-սոփայությունից: Փորձել եմ գտնել շերտեր: Երբեմն և ունեցել եմ նաև բուռն ոգևորության պահեր: Օրինակ՝ «Քաղաքական և գրական հա-յացքների հակասությունները և զեղարվեստա-կան ոճի խնդիրը 5-րդ դարում» ընդարձակ գլուխը, որ գրել եմ 3 օրվա ընթացքում՝ տա-րիների մտածումներից հետո, գրել եմ սարսու-ռով ու ներշնչանքով: Հետո էլ մեկ-երկու ան-գամ կարդացել եմ, ստուգել... Եվ դարձյալ

նույն ապրումները, հուզումներն ու լարումները:

Ահա այստեղ ուզում եմ խոսել իմ կյանքի վերջին շրջանի մասին: Շուրջ 15 տարվա ըն-թացքում երեք ինֆարկտ Երևանում և սրտի մեկ վիրահատություն Ամերիկայում: Ես երևի ուժեղ և համառ քնավորություն ունեմ: Սկսեցի մաքառել հիվանդություն դեմ, քանի որ վերջա-բանը դեռ շուտ էր, կիսատ բանը շատ ունեի: Անշուշտ, ամենօրյա ինսուլինը (ծանր շաքա-րախտ ունեմ), սրտի դեղերը, ի վերջո դեռ ջա-հել էի, վիրահատությունը շատ է օգնել: Բայց գուցե այս տարիներին մեծ դեր խաղաց և աշ-խատանքը: Ինֆարկտից ինֆարկտ և գրեից գրեի: 15 տարում «Խորհրդահայ գրականության պատմություն», «Հայ քննադատության» հատոր-ներ, «Վահան Տերյան» և «Եղիշ Զարենց», «Հովհ. Թումանյան», «Հայ քնարագույներ», զըր-քեր և զանազան հողվածներ, առաջաբաններ, նույնիսկ հարցազրույցներ:

Այս առումով ես ինքս էլ հարգանքով եմ նա-յում իմ կյանքին ու գործին: Եվ դեռ ինչքա՞ն կիսատ գրքեր են մնում անավարտ: Շատ ափ-սոս՝ չկան իմ ընկերներից շատերը, նրանք ինձ տալիս էին ուժ և եռանդ, իրենց տաղանդավոր երկերով ինձ էլ մղում աշխատանքի: Բայց ես չեմ դավաճանում ոչ նրանց, ոչ էլ ինձ. մնում է միայն աշխատել: Ուրիշ էլ ի՞նչ կարող եմ անել. աշխարհիկ կյանքի հմայքները այլևս դժվար եմ ընկալում, ևեռնի ասած՝ էլ բաժա-կակից չեմ... Անցյալի մոլեգին որոնումները պակասում են: Ինձ մնում է վերջին ուժերով ավարտել կիսատ մնացած գործերը: Ահա ողջը: Այս հավաքույթը, ջերմ և տաք վերաբերմունքը ևս ինձ նոր լիցք են տալիս՝ այս առաջացած հասակում դարձյալ շարունակելու վաղուց ընտ-րած դժվար ճամփա...